

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Օգոստոսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգոստոսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում բարձր է եղել նորմայից 3-5 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 2-ին և 5-7-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է +36..+38^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +32...+34^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +40...+42,6^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +37...+39^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +31...+33^{0}C, Շիրակում՝ +30...+35^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +31...+33^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +36...+38^{0}C, Գեղարքունիքում՝ +26...+31^{0}C, Լոռիում՝ +28...+33^{0}C, Արմավիրում՝ +40...+41,5^{0}C, Արարատում՝ +39...+41,3^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +32...34^{0}C, նախալեռներում՝ +36...+41^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 9-10-ին. Շիրակում գրանցվել է +12...+15^{0}C (Աշոցք՝ +8^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +12...+15^{0}C (Հանքավան՝ +8^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +18...+20^{0}C, Տավուշում +17...+19^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +10...+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19...+21^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +19...+24^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +11...+14^{0}C, Գեղարքունիքում՝ +8...+13^{0}C (Սևան՝ +15^{0}C, Շորժա՝ +16^{0}C), Լոռիում՝ +10...+15^{0}C (Տաշիր՝ +8^{0}C), Արմավիրում՝ +16...+18^{0}C (Մերձավան՝+23^{0}C), Արարատում՝ +20...+22^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +9...+13^{0}C, նախալեռներում՝ +17...+21^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 0,2-3մմ (1-20%), Լոռիում՝ 0,3-1մմ (2-4%), Տավուշում՝ Իջևանում 3մմ-22%, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ Ծաղկահովիտում 4մմ-25%, նախալեռներում՝ Աշտարակում 0,2մմ-5%, Գեղարքունիքում՝ 0,3-1մմ (3-7%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0,1մմ -3%, նախալեռներում՝ 8մմ (205%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0,1մմ (2%):

Արմավիրում, Արարատում, Վայոց ձորի նախալեռներում, Սյունքում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են օգոստոսի 9-ին, 10-ին. լեռնային շրջաններում՝ +6...+12^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +14...+17^{0}C, հովտային շրջաններում՝ +19....+22^{0}C:



Դիտված բարձր ջերմային ֆոնի, տեղումների սակավության հետևանքով հողի խոնավության պաշարներն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել են 2-4%-ով:

Լեռնային շրջաններում 20սմ խորության վրա կազմել են 13-30%, նախալեռնային շրջաններում՝ 14-35%, հովտային շրջաններում՝ 11-25%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-35%, նախալեռնային շրջաններում՝ 16-40%, հովտային շրջաններում՝ 15-42%:

Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակել է մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը:

Հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է պտղատուների, եգիպտացորենի, կաղամբի, կարտոֆիլի, բանջարանոցային մշակաբույսերի, ճմերուկի և սեխի հասունացումը, կատարվել է բերքահավաք: Դիտվել է խոտաբույսերի ցողունի աճ, ծխախոտի տերևների հասունացում և չորացում:

Լեռնային շրջաններում պտղատուների մոտ տեղի է ունենում շաքարային նյութերի կուտակում, կատարվել է հացահատիկային մշակաբույսերի բերքահավաք:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ